



ԳԱՆԱՏԱՐԱՅՈՑ ԹԵՄ DIOCÈSE ARMÉNIEN DU CANADA

ԿԱՆՏԵԳՆ

ՍՔ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՏԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԹԵՐԹԻԿ



GANTEGH BULLETIN DU DIMANCHE DE LA CATHÉDRALE
ARMÉNIENNE ST. GRÉGOIRE L'ILLUMINATEUR DE MOTRÉAL

ՄԱՅՐ ՏԱԵՃԱՐ

ԿԻՐԱԿԻ 16 Յունիս 2019

115

DIMANCHE, 16 Juin 2019



ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԷ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ՅԻՇԱՏԱԿ ԵՂԻԱ ՄԱՐԳԱՐԷԻ
COMMÉMORATION DU PROPHÈTE ELIE

Աստուածաշունչի Ընթերցումներ
ՅԱԿՈՎԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՄԱԿԷՆ
(5.16-20)

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՂՈՒԿԱՍՈՒ
4.25-30

Les lectures de la Bible d'aujourd'hui :

JACQUES 5.16-20

LUC 4.25-30

Պատարագիչ՝

Հոգեւոր Հովիւ

ԱՐԺ. Տ. ԴԱԻԻԹ ՔԶՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆ
Célébrant: Prêtre Paroissial
RÉV. PÈRE DAVID MARGARYAN

Առաւօտեան Ժամերգութիւն 9:30-ին

Office Matines à 9 :30

Ս. Պատարագ ժամը 11:30-ին

La Sainte Messe à 11:30

Հոգեհանգիստ ժամը 12:00-ին

Requiem à 12:00

DIACRES - ACOLYTES

Chef de choeur: M. Sarkis Barsemian

Organistes: M. Karen Manucharyan

Mme. Hourì Bedrossian

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

LES LECTURES
DE DIMANCHE



THE SUNDAY
READINGS

ՅԱԿՈՎԲՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ ՆԱՍԱԿԷՆ

(5.16-20)

Ձեր յանցանքները իրարու խոստովանեցէ՛ք ու աղո՛թք ըրէք իրարու համար, որպէս զի բժշկուիք: Արդարին ջերմեռանդ աղօթքը շատ ազդեցութիւն ունի: Եղիան մեզի պէս կրքերու ենթակայ մարդ մըն էր: Աղօթք ըրաւ որ անձրեւ չգայ եւ երեք տարի ու վեց ամիս երկրի վրայ անձրեւ չէկաւ: Եւ նորէն աղօթք ըրաւ ու երկինք անձրեւ տուաւ եւ երկիր իր պտուղը բուսցուց:

Ե՛ղբայրներ, եթէ ձեզմէ մէկը ճշմարտութենէն մոլորի, մէկը թող զանհկա դարձի բերէ: Գիտցած եղէք թէ ան, որ մեղաւորը իր մոլորութեան ճամբայէն կը դարձնէ, հոգի մը մահուանէ կ'ազատէ ու մեղքերու բազմութիւնը կը ծածկէ:

ԱԻԵՏԱՐԱՆ ԸՍՏ ԴՈՒԿԱՍՈՒ

4.25-30

Արդարեւ կ'ըսեմ ձեզի, թէ՛ շատ որբեւայրիներ կային Եղիային օրերը Իսրայէլի մէջ, երբ երեք տարի ու վեց ամիս երկինք գոցուեցաւ, այնպէս որ մեծ սով եղաւ բոլոր երկրին մէջ. Բայց Եղիա անոնցմէ մէկո՛ւն չըրկուեցաւ, հապա միայն Սիդոնացիներու Սարեփթա քաղաքին մէջ որբեւայրի կնոջ մը: Շատ բորոտներ կային Իսրայէլի մէջ Եղիսէ մարգարէին աստենը ու անոնցմէ մէ՛կը չմաքրուեցաւ, հապա միայն Նէեման Սաորին»: Ժողովարանին մէջ ամէնքն ալ բարկութիւնով լեցուեցան՝ երբ այս խօսքերը լսեցին: Ու էլան զանհկա քաղաքէն դուրս հանեցին ու տարին զանհկա մինչէւ այն լերան ցցուած ծայրը, որուն վրայ իրենց քաղաքը շինուած էր, որպէս զի զանհկա բարձր տեղէն վար ձգեն: Բայց ինք անոնց մէջէն անցաւ գնաց:

JACQUES

5.16-20

Confessez vos fautes l'un à l'autre, et priez l'un pour l'autre; afin que vous soyez guéris; car la prière du juste faite avec véhémence est de grande efficace. Elie était un homme sujet à de semblables infirmités que nous, et cependant ayant prié avec grande instance qu'il ne plût point, il ne tomba point de pluie sur la terre durant trois ans et six mois. Et ayant encore prié, le Ciel donna de la pluie, et la terre produisit son fruit.

Mes frères, si quelqu'un d'entre vous s'égare de la vérité, et que quelqu'un l'y ramène; Qu'il sache que celui qui aura ramené un pécheur de son égarement, sauvera une âme de la mort, et couvrira une multitude de péchés.

LUC

4.25-30

Et certes je vous dis qu'il y avait plusieurs veuves en Israël, du temps d'Elie, lorsque le ciel fut fermé trois ans et six mois; de sorte qu'il y eut une grande famine par tout le pays. Et toutefois Elie ne fut envoyé vers aucune d'elles, mais seulement vers une femme veuve dans Sarepta de Sidon. Il y avait aussi plusieurs lépreux en Israël du temps d'Elisée le Prophète; toutefois pas un d'eux ne fut guéri; mais seulement Naaman, qui était Syrien. Et ils furent tous remplis de colère dans la Synagogue, entendant ces choses. Et s'étant levés, ils le mirent hors de la ville, et le menèrent jusqu'au bord de la montagne sur laquelle leur ville était bâtie, pour le jeter du haut en bas. Mais il passa au milieu d'eux, et s'en alla.





Հոգեւոր Հովիւի Պատգամը

Միքելի՛ եղբայրներ եւ քոյրեր ի Քրիստոս,

Ըստ Հայ Առաքելական Սուրբ եկեղեցւոյ տօնացոյցին՝ այսօր Կրակի մարգարէի՝ Եղիայի յիշատակման օրն է: Ի տարբերութիւն Հայ եկեղեցւոյ կողմէ տօնելի միւս սուրբերուն, որոնց յիշատակութիւնը կը կատարուի շաբթուան պարզ օրերուն, Եղիան այն միակ սուրբն է, որուն յիշատակութիւնը կը կատարենք Տէրունական Կիրակի օրը: Վստահաբար այս փաստը կը վկայէ Անոր առաձնա-յատուկ ըլլալը: Աստուծոյ այս երանելի սուրբը կը սերի Ահարոնի տոհմէն, ապրած է մեզմէ մօտ երեք հազար տարի եւ Քրիստոսի ծնունդէն ինը դար առաջ, սակայն այնքան զօրաւոր յատկութիւններով օժտուած է Տիրոջ կողմէ, այնպիսի նախանձախնդրութեամբ պաշտպանած է Կենդանի Աստուծոյ հաւատքը ու հին կտակարանեան ժամանակներու այնպիսի հզօր կերպարէ, որ առ այսօր մեծագոյն օրինակ ու հիացմունքի առարկայ կը հանդիսանայ բոլորիս համար:

Ըստ Սուրբ Եփիման Կիպրացիի անանդութեան. «Երբ ծնաւ Եղիան, անոր հայրը տեսիլք մը տեսաւ, թէ ինչպէս վայելչատես այրերը կ'ողջունէին իր նորածին զաւակը, կը բարութիւն կրակով ու կը կերակէին հուրով»: Այս արդէն իսկ կը խօսէր այն մասին, որ նորածինը ընտրեալ է ու յատուկ առաքելութիւն ունի երկրիս վրայ իրագործելու, իսկ անոր տրուած անունը՝ Եղիա, որ նաեւ «Աստուծոյ ամբողջ» կը նշանակէ, արդէն կը բացայայտէ այդ առաքելութեան էութիւնը: Արդ դառնանք Հին Կտակարանին մէջ տեղ գտած Անոր մասին գրուած պատմութիւններուն՝ աւելի լաւ հասկնալու համար, թէ ով է Աստուծոյ այս արդար մարդը: Երրորդ եւ չորրորդ Թագաւորաց գիրքերուն մէջ տեղ գտած պատմութիւններուն մէջ կը կարդանք, որ Եղիա մարգարէն կ'ապրէր այնպիսի ժամանակաշրջանի մը մէջ, երբ հրեայ ժողովուրդին գերակշռող մասը

հեռացած էր հայրենական հաւատքէն ու կռապաշտութեան հետեւորդ դարձեր էր: Անաստուածութիւնը, մեղքերն ու կռապաշտ քուրմերուն հետեւիլը կործանման կը տանէր այն ազգը, որ ժամանակին ընտրուած էր Աստուծոյ կողմէ: Ուստի հասած էր միջամտութեան պահը, որ կատարուեցաւ Կրակէ մարգարէին միջոցով: Աստուծոյ խօսքին նախանձախնդիր հետեւորդը, մեծագոյն աղօթողն ու ճգնաւորը կ'իջնէ հին կտակարանեան ասպարէզ, որպէսզի յայտնէ Աստուծոյ արդար ցատումին մասին:

Այդ օրերուն թագաւոր Աքաաբի կինը՝ փինիկեցի Հեզաբել թագուհին, չարութիւն սերմանողն էր Իսրայէլի մէջ: Ան իր կռապաշտ հայրենիքէն բազմաթիւ կուռքեր ու քուրմեր իր հետ բերած էր Իսրայէլ՝ այստեղ եւս կռապաշտութիւնը տարածելու համար: Այս Իսրայէլի պատմութեան մէջ յայտնի կռապաշտութեան ամենածանր դէպքն էր ու մարդկային անօրէնութիւնը արդէն այնպիսի սարսափելի չափերու հասած էր, որ Աստուծոյ պատիժը անխուսափելի էր այլեւս: Ուստի Աստուած հաւասարագօր եւ նոյնիսկ առաւել զօրեղ ուժ մը դուրս բերաւ Եղիային՝ այս իրավիճակին դէմ: Ան առանձին դուրս եկաւ ահեղ թագաւորին դէմ ու յայտարարեց. «Կենդանի է երկնային զօրութիւններու Տէր Աստուածը, Իսրայէլի Աստուածը, որուն առջեւ կը կանգնիմ. եթէ այս տարիներուն ցօղ իջնէ կամ անձրեւէ, ապա այդ կ'ըլլայ միայն իմ խօսքովս» (Գ Թագ. 17:1): Եւ իսկապէս, Չօրութիւններու Տէրը երեք ու կէս տարի տեւող սարսափելի երաշտով պատժեց անհաւատութենէն կուրացած այս ժողովուրդը՝ զոջում ու ապաշխարութիւն ակնկալելով անոնցմէ: Սակայն մարդոց սիրտերը այնքան խստացած էին կեղծ ուսմունքներէն ու մեղաւոր ախտերէն, որ ի զօրու չէին այլեւս աստուածային ճշմարտութեան լոյսը ընդունիլ իրենց ներսիդին ու դարձի գալ: Եւ այս մասին պարզ դարձած է արդէն Նոր Կտակարանին մէջ տեղ գտած Յիսուսի հետեւեալ խօսքերէն, թէ. «Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի, որ մարգարէն ընդունելի չէ իր քաղաքին մէջ: Արդարեւ, կ'ըսեմ ձեզի, որ Եղիայի օրով Իսրայէլի մէջ բազմաթիւ այրիներ կային, երբ երկինքը փակուեցաւ երեք տարի ու վեց ամիս, եւ ամբողջ երկրի վրայ մեծ սով եղաւ: Սակայն անոնցմէ ոչ մէկուն մօտ Եղիան չորկուեցաւ, այլ միայն այրի կնոջ մը մօտ՝ սիտոնացիներուն Սարեփթա քաղաքը» (Ղուկ. 4:24-26):

Եւ իսկապէս, սիրելի՛ հաւատացեալներ, այն օրերու Աստուծոյ ընտրեալ ժողովուրդին մէջ չգտնուեցաւ այնպիսի բարեպաշտ ու արդար մէկը, որուն մօտ Աստուած ուղարկէր Իր հաւատարիմ մարգարէն: Քրիստոս ամենեւին ալ պատահաբար չըսաւ այս խօսքերը, այլ ուզեց ընդգծել այն փաստը, որ պատմութեան ընթացքին հրեայ ժողովուրդը միշտ ալ թոյլ կը գտնուէր իր հաւատքին մէջ ու հեշտօրէն կը հեռանար ճշմարիտ Աստուծմէ: Յաւօք սրտի այս կը վերաբերի նաեւ մեզի՝ քրիստոնէաներուս, Աստուծոյ այժմեան ընտրեալ ժողովուրդին, քանի որ մենք ալ թոյլ գտնուելով մեր հաւատքին մէջ՝ կը տարուինք մերօրեայ կոռւքերով՝ զանազան մոլութիւններով, կիրքերով, մեղաւոր կենսակերպով ու անարժան կը գտնուինք Աստուծոյ փրկաբեր լոյսը մեր սիրտերուն մէջ կրելու պատիւին: Աստուծոյ արդարութեան մարմնացում հանդիսացող մարգարէն կ'ուզէր սթափեցնել ու դարձի բերել իր եղբայրակիցներուն եւ այսօր ալ նոյն զգաստութեան կոչերով կը դիմէ մեզ՝ մեղքի մահաբեր թմբիրէն արթնցնելու եւ իր օրինակով Աստուծոյ հանդէպ բոցավառ սիրով լեցուելու համար: Աստուծոյ հանդէպ ունեցած կենդանի սերը, անմնացորդ նուիրումն ու անվերջ վստահութիւնը ուժ տուին արդար մարգարէին միսմինակ դուրս գալու արքայի, բազմաթիւ քուրմերու ու ամբողջ ժողովուրդին դէմ, անվախօրէն բացայայտելու անոնց մոլորութիւնն ու կեղծիքը: «Մինչեւ ե՞րբ պիտի կաղաք երկու ոտքով», - կը յանդիմանէ մարգարէն ճշմարիտ Աստուծմէ հեռանալու համար: Այս հարցը պէտք է նաեւ մենք մեզի տանք, սիրելի՛ քրիստոնէաներ, որովհետեւ հաւատքը զեղեցիկ խօսքեր ու ծիսակատարութիւններ չէ միայն, այլ կենդանի է գործերով, կ'ապացուցուի ապրած կեանքով:

Այն օրերուն Եդիան ղրկուեցաւ մոլորած հրեայ ժողովուրդին Կենդանի Աստուծոյ մասին վկայելու, իր հաւատքին ու աղօթքին զօրութեամբ մեռելներուն յարութիւն տալու, ամբողջովին ջուրով ողորդուած գոհասեղանին կրակը այրելու, իր մէկ խօսքով երկինքը կապելու, յետոյ կրկին արձակելու եւ այլ մեծամեծ հրաշքներ գործելու համար, որպէսզի կործանուող հոգիները դարձի գան եւ ճշմարիտ Աստուծոյ պաշտեն: Եւ Տէր Աստուած թոյլ չտուաւ, որ Իր հաւատարիմ ծառան՝ Կրակէ մարգարէն մահը ճաշակէ, այլ հուրէ կառքով Իր մօտ վերցուց մարմնապէս, որպէսզի ժամանակներու լրումին՝ Քրիստոսի երկրորդ գալուստէն առաջ,

Ենթի հետ երկիր վերադառնայ ու վերջին անգամ Աստուծոյ ճշմարիտ խօսքը քարոզէ Աստուծմէ հեռացած մարդկային ցեղին:

Արդ, սիրելի՛ հաւատաւոր քոյրեր եւ եղբայրներ, տեսանք, որ Եղիա մարգարէն իսկապէս Տիրոջ այն արժանաւոր երանելի սուրբն է, որմէ պէտք է օրինակ առնենք եւ աշխատինք նմանիլ անոր: Գիտեմ, որ շատ դժուար է գուգահեռներ տանիլ հաւատքի կենդանի մարմնացման ու մեր ունեցած խեղճուկ փշրանքներու միջեւ, սակայն յուսահատիլ ալ պէտք չէ: Այո՛, մենք չենք կրնար յարութիւն տալ մեռեալներուն կամ մեր աղօթքով կրակ ու անձրեւ բերել երկինքէն, բայց ինչպէս Եկեղեցոյ Հայրերէն մէկը կը նշէ, կրնանք լուցկիի օգնութեամբ կրակ ստանալ ու անոր վրայ եփած հացով կերակրել սովածին: Չարախօսելու եւ արհամարհելու փոխարէն կրնանք օգնութեան ձեռք երկարել մեր անկեալ ընկերոջը ու ոտքի կանգնեցնել անոր: Մեր սիրով, համբերութեամբ, խոնարհութեամբ ու հոգատարութեամբ լեցուն կեանքերով կրնանք պատճառ ըլլալ ուրիշներուն, որպէսզի տեսնեն Աստուծոյ կենարար լոյսը եւ դարձի գան: Մեր մէկ ժպիտով ու քաղցր խօսքով կրնանք բժշկել մեր մերձաւորի հոգիին վերքերը կամ գոնէ մեղմացնել անոնց պատճառած ցար: Եւ հաւատացէք, որ այս ամեննեւի՛ն ալ քիչ չէ, սիրելի՛ հաւատացեալներ: Սկսեցէ՛ք փոքրէն, հաւատարիմ մնացէք անոր ու կը տեսնէք, թէ ինչպէս Աստուծոյ օրհնութիւնը կ'իջնէ ձեր փոքր, բայց հաւատքով լեցուն եւ խոնարհ գործերուն վրայ՝ աւելի ու աւելի ընդլայնելով զանոնք: Տէրը Եղիային ըսաւ. «Վաղը առաւօտեան կ'ելլես ու կը կանգնիս լեռան վրայ, Տիրոջ առջեւ: Տէրը կ'անցնի, սաստիկ հողմ մը կը բարձրանայ, Տիրոջ առջեւ կը խորտակէ լեռները, փուլ կու տայ ժայռերը, սակայն Տէրը այդ հողմին մէջ չ'ըլլար: Հողմէն յետոյ երկրաշարժ կ'ըլլայ, սակայն Տէրը երկրաշարժին մէջ չ'ըլլար: Երկրաշարժէն յետոյ կրակ կը թափի, սակայն Տէրը կրակին մէջ չ'ըլլար: Կրակէն յետոյ մեղմ օդի ձայն կ'ըլլայ» (Գ Թագ. 19:11, 12): Կը լսէ՞ք, սիրելիներ՛: Ամբողջ տիեզերքին Արարիչը, լեռներու, հողմերու եւ ամէն ինչ Ստեղծողը «մեղմ օդի ձայնի»ն մէջ յայտնուեցաւ՝ ցոյց տալով Իր Էութեան ողջ քնքշութիւնն ու խոնարհութեան մեծութիւնը: Այս խոնարհութիւնն էր, որ երեւցաւ Եղիային Հին Կտակարանին մէջ եւ այս խոնարհութիւնն է, որ խաչի մահուան գնաց Նոր Կտակարանին մէջ:

Արդ, նախ եւ առաջ խոնարհ ըլլանք, սիրելի՛ հաւատացեալներ, իսկ յետոյ Սուրբ Եղիա մարգարէին բարեխօսութեամբ մենք ալ Անոր պէս բոցավառուինք հաւատքի մէջ ունեցած նախանձախընդրութեամբ, համարձակութեամբ ու արդարութեան մեծագոյն զգացումով: Թող ձեր ունեցած ճշմարիտ հաւատքը եւ քրիստոնէական սէրը փրկարար օղակ հանդիսանան մերօրեայ «կռապատութեան» ովկիանոսին մէջ, եւ ինչպէս Եղիա մարգարէն անսասան մնաց իր հաւատքին մէջ ու առանձին պայքարեցաւ համընդհանուր մեղքին դէմ, այնպէս ալ մենք հաստատուն մնանք մեր ուղիին վրայ ու չկործանենք մեր հոգիները աշխարհի աղտոտութեան մէջ: Մաքրենք մեր սիրտերը ամէն տեսակ աղտերէն, որպէսզի աստուածային մաքրագործող կենարար հուրը մեր հոգիներուն մէջ ալ բոցավառի ու արժանի ըլլանք արդար Եղիա մարգարէի բարեխօսութեան՝ Հօրը, Որդիին եւ Սուրբ Հոգիին առջեւ:

Ամէն:

Օրհնութեամբ՝
Տ. Դաւիթ Քհնյ. Մարգարեան

ՀԱԲԹՈՒԱՅ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆԸ

«Իրաքանչիւր ճանապարհ կրնայ տանիլ դէպի Երկինքի Արքայութիւն ... Ես չեմ կանչեր ձեզի դէպի վանք, վանական կեանքի իրական անկումի դէպքին երբեմն աւելի հեշտ է փրկուիլ աշխարհին մէջ: Իրաքանչիւր անձ ունի իր ճանապարհը, միայն թէ մարդ անկեղծօրէն փնտռէ Աստուած, ձգտի դէպի Անոր»

Ս. Վարսանձի Օփթինացի

Իմ կարծիքովս միակ մեծագոյնը՝ դուն քեզ խոնարհեցնելն է, քանի որ հպարտութիւնը մեզ կը խանգարէ սիրել...

Ս. Միվղանոս Աթոսացի

Holidays
2019-06-17

Commemoration of St. Hripsime and her Companions

Noble Hripsime was one of the 37 Christian nuns who together with the Abyss Gayane lived during the period of the reign of the Roman King Diocletianus (284-305 years) in the Monastery of St. Paul located in the mountains of Rome.

Pretty Hripsime captivated the King by her dazzling beauty, who wished to get married to her. Disobeying the king, the pious nuns, led by their Abyss Gayane, ran away from Alexandria. According to the tradition, Holy Godmother appeared to them and told them to leave for the Araratian country - Armenia. So, the nuns went to Vagharshapat. On their way, passing by the Mountain of Varague, Hripsime buried in the earth a relic from the wooden Holy Cross, which she always had on her neck. The relic was found by a miracle in the 7th century and since then the Feast of the Holy Cross of Varague started to be celebrated in the Calendar of the Armenian Apostolic Church along with the other feasts dedicated to the Holy Cross.

The Armenian King Tiridates, becoming aware of the nun's story, himself wished to get married to Hripsime. Hripsime was brought to the palace, and Gayane was also brought to the palace to convince Hripsime to obey the King. But even in that way the King did not manage to get married to Hripsime and becoming angry, ordered to kill all the nuns. Nine days later St. Gregory the Illuminator found the relics of the nuns and burying the relics, built martyriums in those sites, where in the future the Monasteries of St. Hripsime, St. Gayane and St. Shoghakat were erected.

Nuns' martyrdom is a turning point in the history of the Armenian nation. After their martyrdom St. Gregory the Illuminator was brought out of the pit after more than 13 years' imprisonment to spread the light of Christ in Armenia.

In the Armenian Apostolic Church on the days of the feasts dedicated to the memory of St. Hripsime and her companions a Divine Liturgy is celebrated in all Armenian Churches. On the eve of the feast ceremonies are held, which start after the evening service, and Church hymns and songs, dedicated to the nuns, are sang.

ՀՈԳԵՀԱՆԳՍՏԵԱՆ ԿԱՐԳ

**SERVICE POUR LE
REPOS DE L'ÂME**



**SERVICE FOR THE
REPOSE OF SOUL**

ԿԻՐԱԿԻ, 16 Յունիս 2019



Տիար Արթո Մանուկեանի եւ դուստրին՝ Լօրիի,
Արէն եւ Մատլէն Մանուկեաններու,
Սօնիա Գալեմճեան Սիմէթիէի
եւ զաւակներուն՝ Մարի Լօրի, Փաթրիքի եւ Չարլիի,
Արմենակ եւ Սիզան Գալեմճեանի
եւ զաւակներուն՝ Ալէքսանդրի եւ Գարօլինի,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ կնոջ եւ մօր՝
ԱՆԻ ԳԱԼԵՄՃԵԱՆ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(ANNIE KALEMJIAN MANOUKIAN)

Մահուան առաջին տարելիցին առիթով
(սուրճի սպասարկութիւն «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ)



Տիկ. Հուրի Հաքիմեանի եւ զաւակներուն,
Խնդրանքով հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի
իրենց սիրեցեալ ամուսնոյն, հօր, ծնողաց եւ մեծ ծնողաց՝
ՌԱԶՄԻԿ ՀԱՔԻՄԵԱՆԻ (RAZMIG HAKIMIAN)

Մահուան 17-րդ տարելիցին առիթով
Ինչպէս նաեւ՝ **ԿԱՐԱՊԵՏ ՀԱՔԻՄԵԱՆԻ (GARABED HAKIMIAN)**
ԳՐԻԳՈՐ ԵՒ ԱԼԻՍ ՊԵՐՊԵՐԵԱՆԵՐՈՒ
(KRIKOR & ALICE BERBERIAN)

Հոգիներուն ի հանգիստ

ՅԱԻԱԿՅԱԳԻՐ

Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ
Հոգեւոր Հովիւն ու Ծխական Խորհուրդը
Ողբացեալ ՔԱՐՄԷՆ ԹՈՒՐՇՈՒՃՈՒԻ
Մահուան տխուր առիթով Իրենց խորին ցաւակցութիւնները
կը յայտնեն հանգուցեալի բոլոր պարագաներուն,
աղօթելով առ Աստուած,
որ անոր հոգին Երկնային Արքայութեան արժանանայ:

ՆՈՒՐԱՏՈՒԹԻՒՆ ԵԿԵՂԵՑՈՅ

**DON
À L'ÉGLISE**



**DONATION
FOR THE CHURCH**

CHURCH:

Mr. Haik Yasa \$100

IN LIEU OF FLOWERS DONATIONS MADE:

THE LATE RAFFI TUFENKJIAN:

Mr. & Mrs. Sarkis & Madeleine Arzoumanian \$100

RENOVATION FUND:

Mr. Berdj Basmadjian \$300

HOKEHANKISD (REQUIEM SERVICES)

IN MEMORY OF:

THE LATE DEACON ARTO KEPEKCI:

Mrs. Hilda kepekci & Family \$200

THE LATE SAAKIAN FAMILY:

Mrs. Daisy Saakian \$20

YOUGHAKIN EASTER:

Mr. Berdj Basmadjian \$100

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՏՕՆԱՑՈՅՑ ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱԲՈՒՆԱՆ

Յունիս– Juin

17, Երկուշաբթի – Տօն Սր. Կուսանացն Հոիիսիսմեանց

Lundi 17 – Fête des Stes Vierges Hripsimiennes

18, Երեքշաբթի – Տօն Սր. Կուսանացն Գայիանեանց

Mardi 18 – Fête des Stes Vierges Gayané

19, Չորեքշաբթի – Պահք

Mercredi 19 – Jeûne

20, Հինգշաբթի – Տօն Սր. Յովհաննու Կարապետին

Եւ Աթանազիանայ Եպիսկոպոսին

Jeudi 20 – Fête de St. Jean le Précurseur et de l'évêque Athanakiné

21, Ուրբաթ – Պահք

Vendredi 21 – Jeûne

22, Շաբաթ– Տօն Սր. Գրիգոր Լուսաւորչի ելանելոյն ի վիրապէն

Samedi 22 - Fête de la sortie de la Basse-Fosse

de St. Grégoire l'illuminateur



ՇԱԲԹՈՒԱՆ ԱՂՕԹՔԸ

ԱՂՕԹՔ

ՓՈՐՁՈՒԹԻՒՆԵՐԷՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԵԼՈՒ

(Նախորդ աղօթքին շարունակությունը)

Դուն, որ չեկա ք մարդոց հոգիները կորսնցնելու,
այլ՝ փրկելու, քու անսահման ներողամտությամբդ
ներե՛ իմ անթիւ չարիքներու,
որովհետեւ միայն դո՛ւն ես՝ երկինքի մէջ
անճառելի եւ երկրի վրայ անքննելի,
որ ներկայ ես՝ գոյություն ունեցող իւրաքանչիւր տարրի մէջ
եւ աշխարհի բոլոր կողմերը. դուն ամէն բանի սկիզբը,
ամէն բանի մէջ ներկայ,
որ կատարելապէս կ'օրհնաբանուիս բարձունքներուն մէջ:
Հօրը եւ Սուրբ Հոգիին հետ միասին՝ փա՛ռք Քեզի՛ յաւիտեան.
Ամէն:

PRIÈRE

POUR LA PROTECTION CONTRE LA TENTATION

(Suite de la prière précédente)

Toi qui n'es pas venu perdre les âmes des hommes,
mais les vivifier, remets-moi mes innombrables
méchancetés en ta grande miséricorde :
Toi seul, en effet, es au ciel, ineffable, et sur terre,
invisible, en chaque atome d'être et jusqu'aux bornes
extrêmes de l'univers, principe de tout et en tout,
en toute plénitude, béni au plus haut des cieux!
Et à Toi avec le Père et ton Esprit-Saint soit la gloire
dans l'éternité de l'éternité! Amen.

ԵԿԵՂԵՑԻՈՅ ԾԽԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ
ՆՈՐԱՏԻՐ ԱՆԴԱՄՆԵՐՈՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԿԱՐԳ
Կիրակի, 16 Յունիս 2019 Ս. Պատարագի աւարտին

**DEDICATION SERVICE FOR NEWLY ELECTED MEMBERS
OF PARISH COUNCIL OF THE CHURCH**

Sunday, June 16, 2019 at the end of the Divine Liturgy



Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ

CATHÉDRALE ARMÉNIENNE ST-GRÉGOIRE L'ILLUMINEUR

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

615 Stuart Ave., Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066 / Fax: (514) 279-8008 / stgregorychurch@gmail.com

Rev. Fr. DAVID MARGARYAN, Pastor

9 Յունիս 2019

Շնորհաւորական

Գերաշնորհ Տ. Աբգար Եպս. Յովակիմեանին
Առաջնորդ Գանատահայոց Թեմին



Գերաշնորհ Սրբազան Զա'յր,

Գանատահայոց թեմի Սուրբ Գրիգոր Լուսանորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ հոգեւոր դասի, ծխական խորհուրդի, աշխատակազմի, յարակից մարմիններու եւ հաւատացեալ հայորդիներու անունով կը շնորհաւորենք Ձերոյ Սրբազնութեան քահանայական ձեռնադրութեան 23-րդ ամեակը:

Սիրելի՛ Սրբազան Զայր, կ'աղօթենք, որ Տերը առատացնէ Ձեր շնորհները եւ առաւել օրինէ եկեղեցաշէն ու հայրենանուէր Ձեր ընթացքը:

Կը մաղթենք Ձեզ քաջառողջութիւն, աստուածային զօրակցութիւն՝ շարունակելու հոգեւոր ուխտի այն ճանապարհը, որ Ձեր ամենօրեայ ծառայութեան ընթացքին արծերարժէք ազգանուէր գործունեութեամբ՝ յաղթահարելով բազմաթիւ մարտահրաւերներ յանուն մեր Մայր եւ Սուրբ Եկեղեցւոյ պայծառ ընթացքին:

Որդիական խոնարհութեամբ
մատչիմք ի համբոյր Ձերոյ
Սրբազնութեան սուրբ աջոյն՝

Տ. Դակիթ քիչ. Մարգարեան
Հոգեւոր հովիւ

Ի Դիմաց
Ծխական խորհուրդի՝

Անդրանիկ Շիրինեան
Անունապետ



ՀԱՅՑ. ԱՌԱՔ.
ՍԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ
ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ

ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL
OF MONTREAL

ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ
ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԷՍ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԵԱՄԲ՝
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻՆ
ԵՒ «ԿԱՄԱՐ» ԵՐԻՏԱՍԱՐԴԱՅ ՑԱՆՁՆԱԽՈՒՄԲԻՆ
ՏԵՂԻ ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ
ԿԻՐԱԿԻ, 16 ՑՈՒՆԻՍ 2019-ԻՆ, Կ.Ե. ԺԱՄԸ 1:00-ԻՆ

ՃՈՒ ՑԱՅՏԱԳԻՐ



ԵԼՈՅԹ ԿՈՒՆԵՆԱՅ
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ
• ԵՐԳԵՐ • ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ • ՆՈՒԱԳ
ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՆ ԱԲԱՐՏԻՆ ՊԱՏԵԱՃ ՀԻՐԱՍԻՐՈՒԹԻՒՆ
ԿԸ ՍՊԱՍԵՆՔ ՁԵՐ ԲՈԼՈՐԻՆ ՀՐԱԻԷՐ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՀԱՅՑ. ԱՊՈՍ. ԱՊ. ԳԻԳՈՐ ԼՈՒՍԱԻՈՐԻԶ
ԱՊՈՍՏՆՈՐՊՈՒՍՏ ՍԱՏՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՍՄՈՒԹՐԵԱԼ

ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ՏՕՆ

ՍՐԲՈՑ, ԳԻԳՈՐԻ ԼՈՒՍԱԻՈՐԻԶԻ, ՄԵՐՈՑ
ԵԼԱՆԵԼՈՑԻ Ի ՎԻՐՎՊԷՆ
ԵՒ ԱՆՈՒԿԱՄԿՈՉՈՒԹՅԱՆ, ՍՐԲՈՑ ԵԿԵՂԵՑԻՈՑՍ

ԿԻՐԱԿԻ, 23 ՅՈՐԻՒՄ 2019

ՈՒԻՏԻ Ա. ՊԱՏԱՐԱԳԳ

սաստառեան ժամը 10:30-ին

Պատարագի՛

ԱՐԺ. Տ. ՊԱԻԹ ԶՀՆՑ. ՄԱՐԳԱՐԵԱՆ

Հոգևոր Հայր

Յապրաք Ա. Պատարագի տերի պիտի ունենայ մատաղօրինութիւն
և ինքնապիտանութիւն

և զերպարտեռուարան յայտագիր

«Մարի Մանուկեան» սրահին մէջ

Մուտքը՝ ազատ

FEAST

OF ST. GREGORY THE ILLUMINATOR
DELIVERANCE FROM THE PIT AND THE CHURCH NAME DAY

Sunday, June 23, 2019

DIVINE LITURGY

at 10:30 am

Celebrant

REV. FR. DAVID MARGARYAN, Parish Priest

After the Divine Liturgy "Lamb-Madagh"
will be served in "Marie Manougjan" hall

Free Entrance



615 Stuart Avenue, Outremont, Quebec, Canada H2V 2B2
Website: www.saintgregory.ca
Email: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ԱՄԱՌՆԱՅԻՆ ԴՁՏԻԿ ՎԱՃԱՌԵ SUMMER MINI-BAZAAR

ՀԱԳՈՒՄՏԵՂԵՆԻ ԵՒ ՈՒՏԵՍԵՂԵՆԻ
ՎԱՃԱՌԵ

Կազմակերպութեամբ՝
Տիկնանց Յանձնախումբին
ԵՆ Օժանդակներուն

ՇԱԲԱԹ ԵՒ ԿԻՐԱԿԻ՝ 29, 30 ՅՈՒՆԻՍ 2019

Առաւօտեան ժամը 10-էն մինչեւ կ.ե. ժամը 3
Եկեղեցւոյ «Վաչէ Յովսէփեան» սրահին մէջ

Հատոյթը պիտի յատկացուի եկեղեցւոյ
Շինարարութեան Հիմնադրամին

SUMMER MINI-BAZAAR

CLOTHING, HOUSEHOLD ITEMS & BAKE SALE

Organised by:

Ladies Auxiliary

SATURDAY & SUNDAY JUNE 29 & 30, 2019

From: 10:00 to 3:00 pm

In the Church "Vatche Hovsepien" hall

The proceeds will be allocated to the
Church Renovation Fund



615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax: (514) 279-8008/
stgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



Ս. ԳՐԻԳՐԻ ԼՈՒԿԱՒՈՐԻՉ ԱՌԱՋՆՈՐՂԱՆԻՍ ՍՆՅՐ
ԵԿԵՆՅԻ
ST-GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL

ՊՏՈՅՏ ԴԷՊԻ / TRIP TO
ՄՕՆ – ԹՐԱՄՊԼԱՆ / MONT – TREMBLANT



Հինգշաբթի, 4 Յուլիս 2019
Thursday, July 4, 2019

Կազմակերպութեամբ՝ / Organized by:

ՏԻԿԱՆՆՑ ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔԻՆ ԵՒ
ՕԺԱՆԴԱԿՆԵՐՈՒՆ / LADIES AUXILIARY

- **Մասնակցութեան Սակ - \$40 / ներառեալ՝ Ապուր եւ Աղանի բաց սեղան**
- **Participation Fee - \$40 / Including: Soup & Salad Bar**
- **Ճամբորդական Հանրակառք / Օդօրակիչի դրութեամբ**
- **Voyage Bus /Air – Conditioned**

Յաւելեալ մանրամասնութիւններու համար հեռաձայնել
Եկեղեցի (514) 279-3066 / For more information call us at the
Church office at (514) 279-3066



615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՄԲ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ

ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ՏՕՆ

ՎԵՐԱՓՈՒՄԱԿՆ Ա. ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

ԿԻՐԱԿԻ, 18 ՕԳՈՍՏՈՍ 2019
ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՄԲ. ԳԱՏԱՐԱԳ
ԵՒ ԽԱՂՈՂՈՐՀՆԷՔ

առաւօտեան ժամը 10:30-ին

Գառարագիչ՝

ԱՐԺ. Տ. ԴԱԻԹ ԲՀՆՅ. ՍԱՐԳՍԵԱՆ
Հոգևոր Հովի

Յաւարտ Ա. Գառարագի

«Խորովածի Սպասարկութիւն»

նախաձեռնութեամբ՝

Միակն խորհուրդի

Մասնակցութեամբ՝

Գոլասնայ Միութեան հաստատարիմ հայորդեաց

«Անուշեղէնի «Կանաչ» կազմակերպութեամբ՝

Տիկնանց Յանձնախումբին

Եկեղեցայ պարտեզին մէջ:

Մտարի Կուր՝ \$20



ASSUMPTION OF HOLY VIRGIN

SUNDAY, AUGUST 18, 2019

DIVINE LITURGY
AND BLESSING OF GRAPES

at 10:30 am

Celebrant

REV. FR. DAVID MARGARYAN, Parish Priest

At the end of the Blessing of the Grape,
the service of B.B.Q. organized by the Parish Council
with participation of Bolsahay Cultural Center

Pastry sales,
by assistant ladies from the church.



Entry \$ 20

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2

Website: www.saintgregory.ca / Email saintgregorychurch@gmail.com

Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal



ՀԱՅՑ. ԱՌԱՔ. ՍՐ. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՆՈՐԻՉ
ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ Ի ՄՈՆՏՐԵԱԼ
ST. GREGORY THE ILLUMINATOR
ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ԿԻՐԱԿԱՄԱՏԻՑ ԺԱՄԵՐԳՈՒԹԻՒՆ



Միրով կը յայտնենք, թե Յունիս ամիսէն սկսեալ, իրաքանչիւր ամսուայ վերջին Շաբաթ օրը երեկոյեան ժամը՝ 5-ին, Երեկոյեան (Կիրակամտից) Ժամերգութիւն պիտի կատարուի Մոնթրէալի Սր. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցու մէջ:

Այսու կը հրաւիրենք մեր հաւատացելները ներկայ գտնուելու հոգեպարար այս արարողութեան:

Օրինութեամբ՝
Տ. Դաւիթ Քինյ. Մարգարեան, Հոգեւոր Հովիւ

615 Stuart Avenue, Outremont Quebec, Canada H2V 3H2
Website: www.saintgregory.ca / E.mail: saintgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

Ս. Գրիգոր Լուսավորիչ Առաջնորդանիստ Մայր
Եկեղեցի
St. Gregory the Illuminator Armenian Cathedral



ՍՈՒՐԲ ԳԻՐՔԻ ՍԵՐՏՈՂՈՒԹԻՒՆ
ԵՒ
ՀՈԳԵՒՈՐ ԶՐՈՅՑ
Տ. ԴԱԻԹ ԶՆՆՅ. ՄԱՐԳԱՐԵԱՆԻ
ՀԵՏ



Տեղի պիտի ունենայ յառաջիկայ Հինգշաբթի,
20 Յունիս 2019-ին,
երեկոյեան՝ ժամը 7:00-ին եկեղեցւոյ մէջ:

Études bibliques et discussions
avec le R.P David Margaryan

Il aura lieu le jeudi 20 juin 2019
à 19h00 à l'église.

Կը հրաւիրենք մեր սիրելի հաւատացեալները
մասնակից ըլլալու
Տ. Դաւիթ Զնյ. Մարգարեանի՝
ներկայացուցած
Աստուածաշնչական նիւթերուն:

Nous invitons nos chers fidèles à participer à ces
séances d'interprétations bibliques.


Սուրճի եւ թէյի հիւրասիրութիւն
Une collation de café et de thé est servie.

Ի սրտէ կ'ակնկալենք բոլորին
ներկայութիւնը:

Nous comptons sur votre
participation massive.

615 Stuart Avenue, Outremont, QC H2V 3H2 / Tel.: (514) 279-3066/ Fax:
(514)279-8008/ stgregorychurch@gmail.com
Facebook: Saint Gregory Armenian Apostolic Church of Montreal

ԵԿԷՔ ՊԱՅՄԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Եկեղեցոյս պայծառութեան եւ առաքելութեան յարատեւման նախանձախնդիր մեր սիրելի հաւատացեալներ,
Միրով կը յայտնենք, թէ մեր եկեղեցին կարիքն ունի հետեւեալ իրերուն.-

- Արծաթեայ Սկիի
- Օդորակիչի անհրաժեշտ սարքաւորման (Air Conditioner)
- Ս. Սեղանի ոսկեգոյն ասեղնագործ ծածկոց
- Հոգևորականաց շուրջառներ եւ հողաթափեր
- Սկիիի ծածկոցներ եւ Աւետարանի բռնիչ
- Մեծ Պահքի կամ Աւագ շաբթուան յարդարանք (սեղան եւ ծածկոց)
- Յիսուս Մանկան մտուր
- Եկեղեցոյ տօնաձառ
- Ճրագալոյցի եւ Տեսորնդառաջի համար նախատեսուած դուրսի մուրք
- Ջրօրինէրի Սափոր
- Ս. Խորանի 2 մեծ վարագոյր՝ կարմիր եւ սեւ

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակից դառնալ եկեղեցոյ սուրբ առաքելութեան, հաճին կապ պահել եկեղեցոյ հովիւին կամ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

«Այս երկրի մէջ ցանկ՝ քու հացդ, որպէսզի երկնքի մէջ զայն հարիւրով պտուղ տուած գտնես»:

«Հոգևոր հայելի»

Օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ՝
Հոգևոր Հովիւ եւ Օխական Խորհուրդ



ԵԿԷ՛Ք ՊԱՅԾԱՌԱՑՆԵՆՔ ՄԵՐ ԵԿԵՂԵՑԻՆ



Միրելի հաւատացեալներ,

Եկեղեցոյ Սուրբ Սեղանը, որ պատարագեալ Փրկիչի իջեւանն է, ամէն Կիրակի եւ յատկապէս տաղաւար տօներուն զեղեցիկ եւ պայծառ պահելու համար կոչ կ'ուղղենք Ձեզի, որ Ձեր գործօն եւ արդիւնաւետ մասնակցութեամբ կամ ծաղիկներով զարդարէք Տիրոջ Ս. Սեղանը, զորս աղբիւրն է Կենաց եւ Իմաստութեան:

Արդ, անոնք որոնք կը փափաքին իրենց սրտաբուխ նուիրատուութեամբ կամ ծաղիկներու մատուցմամբ զարդարուն պահեն Տիրոջ Ս. Խորանը, կրնան կապ պահել Եկեղեցոյ քարտուղարութեան հետ (514) 279- 3066:

**Օրհնութեամբ եւ շնորհակալութեամբ՝
Հոգեւոր Հովիւ եւ Ծխական Խորհուրդ**

ՄՈՆՔՐԷԱԼԻ Ա. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՄԻՆՈՐԻՉ ԱՌԱՋԵՆՈՐԿԱՆԻՍ ԵԿԵՂԵՑԻ
ST. GREGORY THE ILLUMINATOR ARMENIAN CATHEDRAL OF MONTREAL

ԼԱՎԱԼԻ Ա. ԽԱՉ ՀԱՅՍՏՏՆԵԱՅՑ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
HOLY CROSS ARMENIAN APOSTOLIC CHURCH OF LAVAL

ՕԹՏՎՈՐՄՅՅԻ ՍԲ. ՄԵՍՐՈՊ ՀԱՅՍՏՏՆԵԱՅՑ ԱՌԱՋԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻ
ST. MESROB ARMENIAN APOSTOLIC CHURCH OF OTTAWA

**ՔՐԻՍՏՈՍԻ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹԵԱՆ ՏՕՆԻՆ
(ՎԱՐԴԱՎԱՌ)**

ԱՌԹՈՒՂ

**TRANSFIGURATION OF OUR LORD JESUS CHRIST
(VARTAVAR)**

ԿԻՐԱԿԻ, 28 ՅՈՒԼԻՍ /SUNDAY, JULY 28, 2019

**ՈՒՒՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՌԻԿՕ
PILGRIMAGE TO RIGAUD**



43 RUE DE LOURDES, RIGAUD, QC

**Մանրարամասնությունները յառաջիկային
More information soon**